



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«10» 06 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 073 - 24

Ձեռնարկողը՝

Վայոց ձորի մարզի  
Արենիի համայնքապետարան

Գործուեությունը՝

Արենի համայնքի համար կենտրոնացված կոշտ կենցաղային  
թափոնների աղբավայրի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
Վայոց ձորի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 073 - 24

«40» հունիսի 2024թ.

**Վայոց ձորի մարզի Արենի համայնքի համար կենտրոնացված կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	Վայոց ձորի մարզ
Ներկայացված նյութեր՝	Արենիի համայնքապետարան Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզի Արենի խոշորացված համայնքի Աղավնաձոր բնակավայր

**Ներածական մաս.** Ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի համար կենտրոնացված կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցում:


Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի և ենթակետի՝ աղբավայրի կառուցումը, որպես նախատեսվող գործունեության տեսակ, դասակարգվում է Բ կատեգորիայի: Համաձայն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները: Այսպիսով՝ փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան:

Գործունեությունն իրականացվելու է Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 1.6 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր:

Համաձայն հայտի՝ աղբավայրի տարածքը գտնվում է Ռինդ գյուղից 1.4 կմ, Արենի գյուղից 2.1 կմ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հեռավորության վրա: Աղբավայրի մոտեցման հիմնական ճանապարհն Աղավնաձոր-Արենի ներբնակավայրային հողագրունտային ճանապարհն է: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Տարածաշրջանի մակերևույթը լեռնոտ է և բնութագրվում է խիստ մասնատված, կտրտված, լերկացման-ողողամաշման տիպի ռելիեֆով: Գործունեության համար նախատեսված տարածքը բնութագրվում է, որպես փոքրաթեք տարածք՝ մասնատված, կտրտված և ոչ մեծ խորությամբ ձորակներով:

Տարածաշրջանում հողածածկը հիմնականում բաց շագանակագույն մնացորդային գիպսակիր տեսակի է: Անմիջապես աշխատանքների տեղամասերում հողածածկը



բացակայում է: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Վարդենիսի լեռների հարավարևելյան միջին բարձրության լանջերի, հիմնականում, 5-15° թեքության, երբեմն ավելի փոքրաթեք ռելիեֆային տարածքներում՝ բարդացված առանձին ծորակներով և փոքր գոգավորություններով:

Գրունտների սառեցման առավելագույն խորությունը 0.81 մետր է՝ ըստ ՀՀ օդերևութաբանական կայանների (Եղեգնաձորի տարածաշրջան) դիտարկումների:

Համաձայն հայտի՝ նախատեսվող գործունեության տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝  $a=300$  սմ/վրկ<sup>2</sup>,  $A= 0.3g$ :

Համայնքի ֆիզիկա-աշխարհագրական կոմպլեքսները ներկայացված են ցածրադիր և միջին բարձրության գոտիներում, որտեղ գերիշխում են կիսաանապատները և չոր տափաստանները:

Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը  $+42^{\circ}C$ , իսկ ձմռան բացարձակ նվազագույնը՝  $-24^{\circ}C$ : Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 385 մմ է:

Համաձայն հայտի՝ աղբավայրի տարածքի հողածածկը խախտված է, և այստեղ բացակայում են բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակները, վայրի կենդանիների բնակատեղիները, բնության հատուկ պահպանվող տարածքները, վտանգված էկոհամակարգերը, պատմամշակութային հուշարձանները, անտառային տարածքները:


Արենիի տարածաշրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներից առկա են «Եղեգիս» և «Գնիշիկ» պետական արգելավայրերը, որոնք նախատեսվող գործունեության տարածքից գտնվում են ավելի քան 3-ից 14 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 համակարգով)՝

- |                  |              |
|------------------|--------------|
| 1. 8517288.0464  | 4401927.4652 |
| 2. 8517299.5878  | 4401950.1495 |
| 3. 8517299.5878  | 4401960.0789 |
| 4. 8517294.9749  | 4401965.6285 |
| 5. 8517277.7542  | 4401974.2765 |
| 6. 8517319.5551  | 4402065.0076 |
| 7. 8517334.4297  | 4402120.9325 |
| 8. 8517372.0839  | 4402111.0565 |
| 9. 8517395.3800  | 4402074.4587 |
| 10. 8517418.2252 | 4402036.2059 |
| 11. 8517427.5889 | 4402017.1850 |
| 12. 8517390.5140 | 4401960.3406 |
| 13. 8517317.0215 | 4401944.0547 |
| 14. 8517300.0209 | 4401930.8604 |
| 15. 8517288.0454 | 4401927.4652 |

Աղբավայրը նախատեսված է համայնքի կոշտ կենցաղային թափոնների պահեստավորման, մեկուսացման և հեռացման /թաղման/ համար՝ ապահովելով պաշտպանություն հողի, մթնոլորտի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումից, կանխելով պաթոգենների, կրծողների և միջատների տարածումը:

Աղբավայրում նախատեսվում է ընդունել բնակչության կողմից սպառման գործընթացում բնակելի տարածքներում առաջացած, սանիտարական մաքրման արդյունքում, (համայնքի սանմաքրման ծառայության կողմից հավաքված և աղբավայր տեղափոխված), իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների:



Համաձայն հայտի՝ Արենի խոշորացված համայնքի գրանցված բնակչությունը կազմում է 11412 մարդ: Աղբահանությունն իրականացվելու է համայնքի բնակավայրերից (Արենի, Աղավնաձոր, Ագարակաձոր, Արփի, Գնիշիկ, Խաչիկ, Ելփին, Շիվա, Ռինգ):

Համայնքում հիմնական աղբահանությունն իրականացվում է «Արենի» ՀՈԱԿ-ի միջոցով:

Ըստ հայտի ներկայումս աղբավայրի համար հատկացված տարածքը մասնակիորեն ծածկված է անկազմակերպ եղանակով բերված աղբով: Տարածքը հարթ չէ, առանձին մասերում առկա են բլրանման հատվածներ, որոնց վրա կան մի քանի փոքր թփերով ծածկված տեղամասեր, ծառեր չկան:

Տարածքի որոշ մասերում առկա է բերրի հողաշերտ, որի հզորությունը տատանվում է 8 – 20 սմ սահմաններում: Աղբի տակ գտնվող տեղամասերում գործնականում բերրի հողաշերտ չի պահպանվել:

Համաձայն հայտի աղբավայրի տարածքում առկա են անկանոն ձևով տեղադրված աղբի մի քանի կույտ:

Աղբավայրում իրականացվելու է օրական 5-6 տոննա կենցաղային և սանիտարական մաքրման արդյունքում առաջացած թափոնների ընդունում և պահեստավորում: Շահագործման ժամանակ նախատեսվում է օրական 1-2 մեքենաների երթևեկություն:


Համաձայն հայտի՝

- առաջին փուլում նախատեսվում է իրականացնել անկանոն ձևով տեղադրված աղբի հավաքում և տեղափոխում,
- աղբավայրի ցանկապատում՝ մետաղական, 2 մ բարձրությամբ ցանցով,
- սկզբնական շրջանում աղբավայրում կփորվեն 2 բջիջներ՝ 10 – 12 մ<sup>2</sup> մակերեսով և 2.5 մ խորությամբ,
- բջիջների հատակը կավապատվելու է կամ տեղադրվելու են գեոմեմբրանային ծածկեր,
- պահանջվող 2.5 մետր բարձրությունն ապահովելու համար և խտության ստուգման նպատակով տեղադրվելու են չափման սյուներ /ռեպետներ/,
- կառուցվելու են ստորգետնյա առվակներ/ավազաններ դեպի ցածրադիր վայրեր: Բոլոր բջիջները միացվելու են նախատեսվող առվակներին ստորգետնյա պլաստիկ խողովակներով,
- զտվածքը հավաքվելու է աղբավայրի ցածրադիր գոտում նախատեսվող առվակներում/ավազանում, որտեղ հավաքվելու են նաև անձրևաջրերը,
- աղբավայրն ունենալու է մուտքի և ելքի հսկիչ կետեր,
- մեքենաների անիվների ախտահանման կետ, /մեքենաների ելքի դեպքում կատարվելու է անիվների պարտադիր ախտահանում ԼԻՉՈԼ տեսակի 3% նյութով /, որի արդյունքում արտահոսք չի առաջանում,
- չոր ամառային սեզոններին թափոնները խոնավացվելու են՝ բարձրացնելով դրանց խտացման հզորությունը, հրդեհները կանխելու նպատակով: 1մ<sup>3</sup> թափոնի համար ջրի մոտավոր ծախսը 10 լիտր է: Խոնավացումը նախատեսվում է իրականացնել վերը նշված ավազանում հավաքվող ջրով,
- աղբավայրում նախատեսված է տեղադրել պահուստային ջրի տարողություն:

Աղբավայրում հեռացման ենթակա թափոնների հաշվառումն իրականացվելու է հերթապահ անձնակազմի կողմից:

Համաձայն հայտի՝ աղբավայրի կազմակերպման աշխատանքները կսկսվեն օրենսդրությամբ սահմանված համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո և կիրականացվեն աղբի ընդունման հետ համատեղ, շինարարության առանձին ժամկետ չի նախատեսվում:

Սկզբնական աշխատանքները կներառեն ցանկապատի տեղադրում՝ ցանցի տեսքով, առկա աղբի կուտակում որոշակի հատվածում, առաջին բջիջի փորում, լցնում և ծածկում,



ցածրադիր կետում ավազանի համար նախապատրաստում, կավապատում կամ գեոմեմբրանի տեղադրում, առվակների փորում և այլն:

Աղբավայրի շահագործման ընթացքում ազդեցությունը կապված է աղբի տեղափոխման, կուտակման, գտման և տեղակայման աշխատանքների հետ:

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է աղբի քայքայման /անաերոբ խմորում/ ընթացքում առաջացող աղբավայրային գազի /կենսագազ/ արտանետումներով: Խմորումը կլինի անաերոբ, քանի որ աղբը հարթեցումից հետո կծածկվի հողային շերտով և հետագա գործընթացները տեղի կունենան առանց թթվածնի ազդեցության: Ըստ հայտի՝ կենսագազի հիմնական քանակները կսկսեն առաջանալ աղբավայրի շահագործումից մոտավորապես 3 – 5 տարի հետո:

Արտահոսքն առաջանում է աղբում պարունակվող օրգանական միացությունների քիմիական վերափոխման արդյունքում: Աղբավայրում գտվածքը հավաքվելու է աղբավայրի ցածրադիր գոտում նախատեսվող ավազանում, որը կավապատվելու է կամ ծածկվելու է գեոմեմբրանային ծածկով: Այստեղ են հավաքվելու նաև անձրևաջրերը:

Համաձայն հայտի՝ հաշվի առնելով աղբի փոքր քանակները, աղբային գազի կլանման կամ այրման կայանքի կառուցում չի նախատեսում:

Աղբավայրի ծառայման ժամկետը Արենիի համայնքապետարանը սահմանել է 20 տարի:

Հաշվի առնելով աղբավայրի շահագործման ժամկետը, աղբավայրի փակումից առաջ մշակվելու է փակման ծրագիր:

- Փակումից առաջ որոշվելու է գոյություն ունեցող ենթակառուցվածքի ապագա օգտագործման հարցը,

- դադարեցվելու է աղբավայրում կուտակված աղբի տեղադրումը բջիջների մեջ և այն ծածկվելու է հողագրունտով,

- ապամոնտաժվելու և տարածքից դուրս է բերվելու բոլոր ժամակավոր կառույնները և սարքավորումները, այդ թվում ժամանակավոր տնակը, ջրի պահեստավորման բաքը և այլն,

- տարածքը հարթեցվելու և տարածքից դուրս են բերվելու տեխնիկական միջոցները:

Կազմակերպվելու է տարածքի կանաչապատում՝ օրենքով սահմանված կարգով ձեռք է բերվելու բուսահող: Ըստ նախնական հաշվարկների բջիջների ընդհանուր տարածքը կկազմի 1.2 – 1.4 հա և նվազագույն բուսահող ապահովելու համար կպահանջվի 1800 – 2000 մ<sup>3</sup> բուսահող:

Տարածքի կանաչապատման համար օգտագործվելու է տեղի բնակլիմայական պայմանների բնորոշ ծառատեսակներ՝ Տանձենի ուռենատերև, Մասրենի առատափուլ, Մասրենի շան, Նշենի Ֆենցլի: Ընդհանուր առմամբ նախատեսվում է տնտկել 500 – 600 ծառ:

Անմիջապես ներկայացվող տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը որոշելու համար կատարվել է նմուշառում՝ պասիվ նմուշառիչներով, որոնք տեղափոխվել են շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա և կատարվել է լաբորատոր անալիզ: Անալիզի արդյունքների համաձայն կոնցենտրացիաները գտնվում են ՍԹԿ սահմաններում:

Համաձայն հայտի գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված տրանսպորտի տեղաշարժի, թափոնների տեղափոխման և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:

Գնահատման հայտում նախատեսվում է օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում):

Մասնավորապես նախատեսվում է՝

- նվազեցնել աղբավայրի տարածքում անձածկ թափոնների ազդեցության ենթարկվելու ժամանակահատվածը, մասնավորապես՝ օդի բարձր ջերմաստիճանի օրերին,



- թափոնները բեռնաթափել, տարածել և կոմպակտավորել հնարավորինս փոքր տարածքում,

- օգտագործել հոսքերի /ֆիլտրատների/ համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ,

- փոշու նվազեցման համար՝ հողածածկ մակերեսների վրա իրականացնել ջրցանում, ներառյալ՝ հողի տեղափոխման աշխատանքների ընթացքում, մինչև մաքրումը և փորումը, հետլիցքը, կոմպակտացումը կամ աստիճանավորումը,

- թույլատրել միայն աղբատար մեքենաների մուտքը տարածք,

- ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ միջոցներով, որոնցից չի առաջանում արտահոսք՝ մինչև տեղանքի լքումը,

- պարբերաբար ստուգել ֆիլտրատների հավաքման և մշակման կառույցները՝ պատշաճ շահագործման տեխնիկական պայմանների ապահովման նպատակով,

- սպասարկող անձնակազմին ապահովել անհատական պաշտպանման միջոցներով, իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով,

- շինարարության և շահագործման ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կազմելու են 80.0 հազար ՀՀ դրամ/տարի:

**Պատճառաբանական մաս.** նախատեսվող աղբավայրի կազմակերպումը կատարվելու է արդեն ազդեցության ենթարկված տարածքներում, և համաձայն հայտի, աղբավայրի հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում, ինչն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Աղբավայրի կազմակերպման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի, քաղաքաշինության կոմիտեները, Վայոց ձորի մարզպետարանը, Արենի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:


Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հայտն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Վայոց ձորի մարզի Արենի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

### **Փորձաքննական պահանջներ**

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

- Բացառել գործունեության տարածքում՝ հայտով չնախատեսված թափոնների կուտակումը՝ թափոնների այրումը:

- Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման աշխատանքներն իրականացնել Կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի «ՀՀ տարածքում գոյություն



ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման և փակման նվազագույն նորմերը հաստատելու մասին» N 27-Ն որոշմամբ հաստատված նորմերին համապատասխան:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Վայոց ձորի մարզի Արենի համայնքի համար կենտրոնացված կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան